ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

17. 06. 2024թ.

No 01/01-820

ԱՁ Ռուբեն Բաղդիշյանին
Ք. Երևան Զաքյան 5
ՀՎՀՀ 23198053

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ «Պատվիրատու») և Ռուբեն Բաղդիշյան ԱՁ-ի (այսուհետ «Կատարող») միջև 2024թվականի մայիսի 31-ին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում կնքվել է N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-24/ԷՓ-1 պայմանագիրը, ըստ որի Կատարողը պարտավորվում է մինչև 2024թվականի դեկտեմբերի 25-ը Պատվիրատուին մատուցել խմբային էքսկուրսիայի կազմակերպման ծառայություններ: Սակայն 2024թվականի հունիսի 11-ին Կատարողը Պատվիրատուին ծանուցել է, որ առաջացած խնդիրների պատճառով չի կարող մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիս 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որի հիման վրա լիազորված մարմինը մասնակցին կներառի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտորի ժ/պ _____ **Ա. Գրիգորյան**

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am